

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/1

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լևոն Սաֆարյանի 30.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.10.2015 թ-ի թիվ 1237/02 որոշման դեմ:

Ա/Ձ Լևոն Սաֆարյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Լևոն Սաֆարյանը խնդրում է չեղյալ ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.10.2015 թ-ի թիվ 1237/02 որոշումը՝ կապված վերջինիս ոչ իրավաչափ լինելու հետ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Լևոն Սաֆարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 16.10.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 551.128 դրամ, որն առաջացել է 2015 թ-ի ապրիլ ամսվա ԵՏՄ-ի հաշվարկով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 19.10.2015 թ-ին ընդունվել է թիվ 1237/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Լևոն Սաֆարյանից 551.128 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ համաձայն ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 13.10.2015 թ-ի թիվ 33-2/949335-15 տեղեկանքի, ինչպես նաև «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների Ա/Ձ Լևոն Սաֆարյանը ԱԱՀ-ի գծով ունի չկատարված հարկային պարտավորություններ, որոնք 16.10.2015 թ-ի դրությամբ կազմել են 551.128 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 2015 թ-ի ապրիլ ամսվա ԵՏՄ-ի հաշվարկով:

Ա/Ձ Լևոն Սաֆարյանը, ստանալով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.10.2015 թ-ի թիվ 1237/02 որոշումը, այցելել է հարկային տեսչություն և ներկայացրել Որոշման մեջ արտացոլված պարտքի գումարը վճարված լինելը հավաստող փաստաթուղթ: Ընդ որում հարկ է նշել, որ համապատասխան վճարումը Ա/Ձ Լևոն Սաֆարյանի կողմից կատարվել է դեռևս 2015 թ-ի մայիս ամսին: Արդյունքում, Կենտրոնի ՀՏ կողմից «Հարկատու 3» համակարգում կատարվել է Ա/Ձ Լևոն Սաֆարյանի ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների վերահաշվարկ՝ նվազեցնելով Որոշման մեջ արտացոլված 551.128 դրամի պարտավորության գումարը:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից հետևում է, որ Ա/Ձ Լևոն Սաֆարյանից 551.128 դրամ պարտավորության գումար գանձելու մասին ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.10.2015 թ-ի թիվ 1237/02 որոշումը կայացվել է նշված պարտավորության բացակայության պայմաններում, ինչը հիմք է ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, Ա/Ձ Լևոն Սաֆարյանի գանգառը բավարարելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 19.10.2015 թ-ի թիվ 1237/02 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.Մ.ԻՐԱՆԻՍՅԱՆ